**YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY**

*after Mkhitar Heratsi*

# ԲՐԵՆԴԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

… *մենք կերտում ենք առողջ հայրենիք*

# Առաքելություն

Գրեթե մեկ դար մեր առաքելությունն է եղել պատրաստել բարձրորակ կրթություն ու որակավորում ունեցող բժիշկների՝ աշխարհում փոփոխություն կատարելու համար: Մենք շեշտը դնում ենք հետազոտության ու բժշկության՝ որպես գիտության, զարգացման  վրա, ինչպես նաև ուսանողների գործնական գիտելիքի վրա: Մենք հավատում ենք, որ մեր ուսանողների մեջ ներդրում անելը մեծապես նպաստում է առողջապահության ոլորտի զարգացմանը:





# Տեսլական

Ունենալով 100 տարվա  փորձագիտություն ու փորձառություն՝ մենք ցանկանում ենք ընդլայնել մեր սահմանները և օգտագործել մեր ներուժը՝ համաշխարհային մակարդակի համալսարան դառնալու համար: Մենք արդեն իսկ ունենք շատ միջազգային ուսանողներ, ովքեր ԵՊԲՀ-ի համայնքի սիրված մասն են կազմում: Մենք ցանկանում ենք դառնալ մի կենտրոն, որտեղ երիտասարդ ուղեղները կարող են առաջարկել   հեղափոխական գաղափարներ բժշկության ոլորտում:
Զարգացման այս փուլում բոլորի աջակցությունը շատ ողջունելի է:

# Մեր արժեքները

## Ապագային ուղղված մոտեցում

Մենք ակնկալում ենք մեր ուսանողներից նորարարական կողմնորոշում՝ նոր մոտեցումներն ու հնարավորությունները ընկալելու համար: Շատ կարևոր է, որ ուսանողները լինեն ստեղծարար հետազոտական գործընթացում, քանի որ մեր ֆակուլտետը բաց է նոր գաղափարների առջև ու պատրաստ է օգնել ուսանողներին՝ ծրագրերի իրականացման հարցում:

## Աջակցություն

Մեր Համալսարանի հիմքում ընկած է միմյանց աջակցելը: Դա վերաբերում է թե՛ ուսանող-ուսանող, թե՛ ուսանող-դասախոս հարաբերություններին: Մենք գիտակցում ենք, որ ավելի արագ ու ավելի մեծ արդյունավետությամբ կարելի է հասնել նպատակային արդյունքների, եթե մարդը միայնակ չի աշխատում: Մեր համայնքը վստահեցնում է, որ բոլորը կունենան հնարավորություն ինչ-որ կարևոր բան անելու, և մենք պատրաստ ենք օգնել ամեն հարցում:

## Ազնվություն

Ակադեմիական ներգրավվածությունը մեծ ձեռքբերումներ ունենալու հիմքն է: Մենք ցանկանում ենք, որ մեր ուսանողները շատ բան տանեն համալսարանից և առաջին հերթին նրանք պետք է ազնիվ լինեն իրենք իրենց նկատմամբ: Խաբեությունը մեր համալսարանում քննարկման առարկա չէ:

## Պրոֆեսիոնալիզմ

Ակադեմիական ներգրավվածությունը մեծ ձեռքբերումներ ունենալու հիմքն է: Մենք ցանկանում ենք, որ մեր ուսանողները շատ բան տանեն համալսարանից և առաջին հերթին նրանք պետք է ազնիվ լինեն իրենք իրենց նկատմամբ: Խաբեությունը մեր համալսարանում քննարկման առարկա չէ:

# Բրենդի անհատականություն

Մեր մարդիկ ու պատմությունը մեր ապրանքանշային բնութագրերի  կերտման հիմնական բաղադրիչներն են: Ավանդույթները մեր ապրանքանշային  ինքնության հիմնական մասն են կազմում: Մենք հավատարիմ ենք մեր անցյալի նկատմամբ, ահա թե ինչու վստահության աղբյուր ենք հանդիսանում հասարակության համար: Աշխատասիրությունն ու խելքը կարևոր գործոններ են՝  ընտրված մասնագիտության մեջ առաջնորդող դիրք գրավելու ու հաջողակ լինելու համար: Մեր ինքնավստահությունը փոխանցվում է մեր ուսանողներին, ովքեր դրա կարիքն ունեն իրենց ապագա կարիերայում: Իհարկե, մենք բարձրակարգ հաստատություն ենք, ինչը  նշանակում է, որ ոչ բոլորը կարող են սովորել ու աշխատել այստեղ: Մեր ընտրական ընթացակարգը միտված է վստահեցնելու, որ մեր ֆակուլտետի, անձնակազմի և ուսանողների բնութագրերը համապատասխանում են Համալսարանի ապրանքանշային բնութագրերին:

Մեկդարյա պատմություն ունենալը չի նշանակում ծեր լինել: Մենք միշտ փորձում ենք լինել այնքան երիտասարդ ու ժամանակակից, որքան հնարավոր է:  Մենք ներմուծում ենք ուսուցման նոր մեթոդներ սովորելու գործընթացում և նոր տեխնոլոգիաներ՝ հետազոտական աշխատանքների համար:







# Լոգո և լոգոտիպ

Սպիտակ լոգոն օգտագործվում է բոլոր տարբերակներում, ամեն անգամ երբ առկա է գունավոր ֆոնը ու լոգոն տեսանելի է: Մեծամասամբ, նախընտրելի է օգտագործել կապույտ ֆոնը, երբ-որ հնարավոր է, քանի որ դա մեր ապրանքանշային  ինքնության մասն է ու մեր գունապնակի գլխավոր գույնը: Լոգոտիպի անվան բաղադրիչի տպագրությունը ունի երկու մաս:

**Կենտրոնական լոգո**
Կենտրոնամետ  տարբերակը լավ է  աշխատում է, երբ հասանելի տարածությունը խնդիր է, թույլ է տալիս, որ Համալսարանը պարզորեն նշվի՝ առանց խախտելու ընթեռնելիությունը:

**Հորիզոնական Լոգո**
Համալսարանի հորիզոնական լոգոն օգտագործման համար նախընտրելի լոգոն է, երբ տարածությունն ու չափը սահմանափակված չեն:

ԵՐԵՎԱՆԻ  ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# Բաղադրիչներ

Լոգոյի բաղադրիչներն են  շրջանը և լոգոտիպը: Նախընտրելի է, որ դրանք օգտագործվեն միասին: ԵՊԲՀ-ին որպես գործընկեր տեղադրելու դեպքում՝ շրջանը կարող է օգտագործվել առանձին:  Այն նաև կարող է առանձին օգտագործվել Համալսարանի գովազդային ապրանքների վրա տեղադրելու ժամանակ: Օգտագործման մնացած ձևերի դեպքում խնդրում ենք կապ հաստատել մեր մարքեթինգի բաժնի հետ:

ՇՐՋԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# Հնարավոր գույներ

Մեծապես խորհուրդ է  տրվում  օգտագործել մեր լոգոյի սպիտակ տարբերակը, եթե ֆոնը սպիտակ չէ կամ չունի ցածր տեսանելիություն: Գունավոր տարբերակը նույնպես առկա է և շատ հայտնի է, քանի որ ԵՊԲՀ-ի պատմության ընթացքում այն պաշտոնական լոգոն է եղել:

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# Երկրորդական լոգո

Բոլոր դպրոցները, կենտրոնները և ծառայությունները կարող են ունենալ երկրորդական լոգոն օգտագործելու տարբերակ: Դպրոցական լոգոն պետք է տեղադրվի ցուցադրված օրինակի պես : Դպրոցի անվան չափը պետք է հավասար լինի Համալսարանի անվան տառատեսակի չափին: ԵՊԲՀ-ի ծառայողական բաժանմունքները նույնպես ունեն լոգոյի իրենց ձևը, որը ցուցադրված է օրինակում:

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ընդհանուր բժշկություն

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դեղագիտական

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաշվապահություն

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մարդկային ռեսուրսներ

# Նվազագույն Չափը

Յուրաքանչյու լոգոյի մինիմալ չափ որոշվում է կլոր նշանի չափով: Կլոր նշանը չպետք է ունենա 15 մմ պակաս տրամագիծ: Անբողջական լոգոն չպետք է լինի 50 մմ փոքր:



# Բացառման գոտի

Բացառման գոտու առկայությունն  ապահովում է, որ լոգոն մնա  ազատ տեսողական միջամտությունից  և պարզ երևա: Բացառման գոտին պետք է նվազագույնը լինի 0.3 x, որտեղ x-ը լոգոյի բարձրությունն է: Ցանկացած գրքույկի կամ փաստաթղթի  կտրված կամ ծալված ծայրից, որի վրա լոգոն պետք է կիրառվի , պետք է լինի նվազագույնը 0.3 x ազատ տարածություն. Կարող են լինել նաև դեպքեր, երբ լոգոն պետք է տեղադրվի ավելի  հեռու, քան այս նվազագույն հեռավորությունն է տվյալ ձևաչափի ծայրերից՝ ներդաշնակ դիզայնի համար:






# Լոգոյի տեղադրումը

Համալսարանի կողմից ընդունելի է լոգոյի տեղադրումը վերևի ձախ կողմում: Ներքևի աջ կամ ձախ կողմում տեղադրելը կիրառելի է, երբ-որ այլ ընկերությունների հետ համագործակցություն կա: Միջոցառումների, կոնֆերանսների կամ այլ երաշխավորության համար, երբ ԵՊԲՀ-ն ունի առաջնային դիրք, այն պետք է տեղադրվի այլ ընկերությունների հետ մի շարքի վրա, այլ ընկերությունների առջևի մասում: Տեղադրման այլ դեպքերի համար ավելի ճիշտ կլինի խոսել Համալսարանի դիզայների հետ՝ լոգոն ճիշտ տեղադրելու համար:

# Լոգոյի օգտագործում

Համալսարանի անվանումը և զինանշանը գրանցված ապրանքանիշեր են և կարող են օգտագործվել միայն Համալսարանի կամ գրանցված արտոնագիր ունեցողների թույլտվությամբ: Դուք կարող եք օգտագործել անվանումը և լոգոն, աջակցելու համար այն գործողություններին, որոնց համար Համալսարանը (կամ դրա լիազորված պատվիրակներից մեկը) պատասխանատու է: Օգտագործման այլ դեպքերում պահանջվում է թույլտվություն Համալսարանից: Արտոնագրի ու լոգոյի հետ կապված հավելյալ տեղեկությունների համար կապ հաստատեք մեր Մարկետինգի անձնակազմի հետ:

Էլ. Հասցե՝ marketing@ysmu.am


PHARMACOLOGY
MEDICINE

# Բրենդային Գույներ

## Հիմնական գույներ

CMYK 94 76 51 58
RGB 11 37 55
HEX 0B2537

CMYK 81 35 2 0
RGB 7 137 199
HEX 0789C7

CMYK 100 80 0 60
RGB 0 28 84
HEX 001C54

## Ֆոնային գույներ

CMYK 9 3 1 0
RGB 227 235 243
HEX E3EBF3

CMYK 7 5 8 0
RGB 234 233 229
HEX EAE9E5

CMYK 0 0 0 0
RGB 255 255 255
HEX FFFFFF

## Լրացուցիչ գույներ

CMYK 9 31 100 0
RGB 233 177 33
HEX E9B121

CMYK 1 97 97 0
RGB 233 43 40
HEX E92B28

CMYK 88 46 33 7
RGB 22 113 141
HEX 16718D

CMYK 81 64 19 3
RGB 69 98 147
HEX 456293

CMYK 96 86 38 31
RGB 34 49 88
HEX 223158

CMYK 0 0 0 100
RGB 35 31 32
HEX 231F20

* Կապույտ գույնի այլ երանգները նույնպես հասանելի են օգտագործման համար, բայց պետք է նախորոք քննարկել համալսարանի դիզայներների հետ:

# Տիպաբանություն

Տպագրությունը նույնպես շատ կարևոր դեր ունի մեր ապրանքանշային ինքնության տեսողական ընկալման մեջ: Մենք ցանկանում ենք ցույց տալ մեր պատմությունը, ավանդական մոտեցումը, ինչպես նաև նորարարությունների ներմուծումը մեր մշակույթի մեջ: Հայերեն գրելիս՝ մենք գլխավորապես օգտագործում ենք 2 տառատեսակ՝ GHEA Grapalat and Trebuchet.

## GHEA Grapalat

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Աա light

*Աա* italic

**Աա** bold

## Terbushet MS

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Աա light

*Աա* italic

**Աա** bold



# Նամակ

Այս էջում Դուք կարող եք տեսնել նամակի նմուշներից մեկը, որն օգտագործվում է սովորական նամակագրության մեջ: Բոլոր ձևանմուշները հասանելի են Microsoft Word- ում: Լրացուցիչ տեղեկությունների դեպքում, Դուք կարող եք այն ավելացնել մնացած տեղեկությունների բաժնում, որոնք կապակցված են այլ կապի միջոցով: Պետք է օգտագործել GHEA Grapalat տառատեսակի 12 տառաչափով:

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, 0025, Երևան, Կորյուն փ. 2 | Հեռ. +347 10 582 532 | Ֆաքս. +374 10 564 111 | www.ysmu.am | Էլ. հասցե genserv@ymsu.am

**Անուն Ազգանուն**

**Պաշտոն**

**Հաստատություն**

Հարգելի ------------------,

Այս նամակի օրինակը գրված է GHEA Grapalat տառատեսակով, 12 տառաչափով: Նամակներ գրելիս պետք է օգտագործել հենց այս ոճը:

Այս նամակի օրինակը գրված է GHEA Grapalat տառատեսակով, 12 տառաչափով: Նամակներ գրելիս պետք է օգտագործել հենց այս ոճը:

Այս նամակի օրինակը գրված է GHEA Grapalat տառատեսակով, 12 տառաչափով: Նամակներ գրելիս պետք է օգտագործել հենց այս ոճը:

Այս նամակի օրինակը գրված է GHEA Grapalat տառատեսակով, 12 տառաչափով: Նամակներ գրելիս պետք է օգտագործել հենց այս ոճը:

Այս նամակի օրինակը գրված է GHEA Grapalat տառատեսակով, 12 տառաչափով: Նամակներ գրելիս պետք է օգտագործել հենց այս ոճը:

Այս նամակի օրինակը գրված է GHEA Grapalat տառատեսակով, 12 տառաչափով: Նամակներ գրելիս պետք է օգտագործել հենց այս ոճը:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անուն Ազգանուն

Օր/ամիս/տարի

# Ծրար

AI ձևանմուշը հասանելի է փոփոխություններ կատարելու համար: Ինֆորմացիայի դասավորությունը հնարավորություն է տալիս փոփոխություններ կատարելու:



# Բիզնես քարտ

Մենք խորհուրդ ենք տալիս մեր ֆակուլտետին ու անձնակազմին ունենալ այցեքարտի միասնական տարբերակ: Դա պաշտոնական տարբերակն է և երբ մեր աշխատակիցները ցույց են տալիս իրենց քարտը, որը վկայում է, որ նրանք ԵՊԲՀ-ի մասն են կազմում, նրանք պետք է սա օգտագործեն: Դուք կարող եք դա ներբեռնել մեր կայքից և հարմարացնել այն:

## Առաջին էջ

55 mm




85 mm

## Երկրորդ էջ



# Էլեկտրոնային ստորագրություն

Սա կոնտակտային տեղեկություն կամ հրաժարումների մասին տեղեկություն տալու այն մեթոդն է, որը խորհուրդ ենք տալիս կիրառել էլեկտոնային նամակի ներքևի մասում: Այն կարող է խմբագրվել Microsoft Outlook-ում՝ սեղմելով վերևի հատվածի ձախ կողմի «Գործիքներ» պատուհանը, որին հաջորդում է «Տարբերակներ» պատուհանը՝ բացված ցուցակի մեջ, հետո պետք է սեղմել «Նամակի Ձևաչափ» հատված՝ մոխրագույն արկղի վերևում և «Ստորագրություն» կոճակը այդ հատվածում: Այս մեթոդը Ձեզ հնարավորություն է տալիս էլեկտրոնային նամակի ստորագրությունը խմբագրելու տարբերակ: Այս տեքստը պետք է ներկայացվի մուգ կապույտով: Ուղարկողը նախազգուշական միջոցներ պետք է ձեռնարկի՝ վիրուսները առկայությունը ստուգելու համար, իսկ ընդունողը բացում է այս նամակ՝ կրելով վտանգի պատասխանատվությունը:

## Օրինակ


Անուն Ազգանուն/ Name Surname
Պաշտոն/ Position
Բաժնի անունը/ Department name
ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Կորյունի 2, Երևան, 0025, Հայաստան
Հեռ: XXXXXXXXXXXXXXXX
Ֆաքս: XXXXXXXXXXXXXXXX
Էլ. փոստ: yourname@ysmu.am
http://ysmu.am/

# Վիզուալ ներկայացումներ

Power Point-ի  նմուշը ստեղծվել է՝ տեսողական հետևողականությունը ապահովելու համար և պետք է օգտագործվի բոլոր պրեզենտացիաների համար: Այս նմուշը պետք է օգտագործվի արտաքին ու ներքին վիզուալ նյութեր պատրաստելու համար: Դուք կարող եք ներբեռնել  PPT ձևի նմուշը մեր կայքից:

## Առաջին էջ




## Այլ էջեր





# Բրենդային իրեր

Երևանի Պետական Բժշկական Համալսարանը որակավորված և հեղինակություն ունեցող ապրանքանիշ է և պաշտոնապես օգտագործվում է տարբեր ապրանքների վրա: Սկսած հագուստից, ինչպիսիք են հուդիները և շապիկները, մինչև գրիչներն ու նոթատետրերը, մենք ունենք գովազդային ապրանքների շատ տարատեսակներ: Չնայած շատ գայթակղիչ է դնել Համալսարանի լոգոն տարբեր իրերի վրա, մեր ապրանքանիշի ներգրավվածությունը պահպանելու համար, սակայն դա պետք է սահմանափակվի միայն այն իրերով, որոնք լավագույնս ներկայացնում են համալսարանը և օգնում են ներկայացնել մեր ապրանքանշային գործելաոճը: Համալսարանը պահանջում է, որ իր ապրանքներն արտադրող կազմակերպությունները լինեն հավաստագրված:









# Լուսանկարչություն

Տեսողական պարագաները հասարակության հետ հաղորդակցվելու ամենաարդյունավետ մեթոդներից մեկն են: Ավելի լավ է օգտագործել լուսանկարներ, երբ հնարավոր է՝ հանդիսատեսին տեղեկություն հասցնելու համար: Լուսանկարները պետք է ներկայացնեն գլխավոր հաղորդագրությունը, որը մենք փորձում ենք տեղ հասցնել և պետք  է համապատասխանեն համալսարանի պահանջներին:
Լուսանկարների օգտագործումը պետք է համապատասխանի Երևանի պետական բժշկական համալսարանի  ոճին ու ընդհանուր դիզայնին: Այն պետք  է փոխանցի  ապրանքանշանի ինքնությունն ու իմաստը, որ մարդիկ կարողանան կապնվել դրա հետ:
Համալսարանի և համալսարանական կյանքին վերաբերող բարձրորակ նկարները անվճար ներբեռնման համար հասանելի են մեր կայքում: Դուք կարող եք խմբագրել նկարը,  եթե անհրաժեշտ է, սակայն  չպետք է հեռացնեք լոգոյի հատվածը:
ՆՇՈՒՄ՝ Տպելու համար նախատեսված նկարների  թվային ֆայլի չափերը  պետք է ավելի մեծ լինեն (300dpi), քան այն նկարների, որոնք նախատեսված են առցանց ցուցադրության համար (72dpi):







Լրացուցիչ տեղեկությունների համար՝
Մարքեթինգի բաժին
Հեռախոս ՝(+374 11) 621 000 (471)
էլ. հասցե ՝ marketing@ysmu.am